ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 695-Ա « 10 » փետրվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի Հ.3092-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Ասլան Միրզոյանի լ/ա Գեորգի Իսայանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2025 թվականի հուլիսի 31-ի հ.3092-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու համար:

Ազատամարտիկների պողոտայի 4-րդ նրբանցք, հ.29 հասցեին կից հողամասի նոր չափագրության արդյունքում պարզվել է, որ քննարկվող հողամասի փաստացի մակերեսը 28.21քմ-ի փոխարեն կազմում է 18.25քմ:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-141013-25 եզրակացությունը.

1.Երևանի քաղաքապետի 2025 թվականի հուլիսի 31-ի «Ազատամարտիկների պողոտայի 4-րդ նրբանցք հ.29 հասցեին կից հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու և հասցե տրամադրելու մասին» հ.3092-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման մեջ «28.21քմ» թիվը փոխարինել «18.25քմ» թվով.
2) որոշման 5-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«5. Ազատամարտիկների պողոտայի 4-րդ նրբանցք հ.29 հասցեում գտնվող, Ասլան Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից՝ 18.25քմ մակերեսով հողամասը, Երևան համայնքի անվամբ գրանցելուց հետո որպես ընդլայնում, սեփականության իրավունքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) Ասլան Միրզոյանին՝ որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 6-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 698.790 /վեց հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր իննսուն/ ՀՀ դրամ և փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ ապահովել Ազատամարտիկների պողոտայի 4-րդ նրբանցք, հ.29 հասցեին կից հողամասի մակերեսի փոփոխության արդյունքում առաջացած կադաստրային արժեքի տարբերության գումարի /381.371 ՀՀ դրամ/ հաշվանցումը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ